

ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ ղիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում և.

- 1) ինչևից-, եղեր-րգ, գեղուղ-շ, ան-րկրա
- 2) ան-զր, խուն-րամ, երթե-, նախօր-
- 3) նրբ-ըշիկ, լայն-զր, լուս-րես, ան-ացում
- 4) բազմ-բանգ, օրբստօր-, հր-շ, դոդ-րոցը

2

Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում դ.

- 1) հաղոր-ել, վար-ապետ, խոր-անալ, հար-արել
- 2) անդա-րում, բուր-, խոր-ուրորդ, զար-ուցիչ
- 3) անգայ-, ըն-արմանալ, լեր-անալ, վր-ովել
- 4) լյար-, Նվար-, դր-ել, հար-աշաղախ

3

Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում իս.

- 1) դաստ-րակ, իշ-ս, եղ-մ, կր-
- 2) Սուք-ս, միմ-նց, բար-ցակամ, խավ-ը
- 3) օլիմպ-ական, Անան-, միլ-րդ, մում-
- 4) հեք-աթային, առօր-կան, Մար-մ, ն-արդ

4

Ո՞ր շաբքում ուղղագրական սխալ կա.

- 1) միզապատ, Սարգիս, ոքեկոչել, սայթաքել
- 2) ուրագ, ձիթաճրագ, պարզե, զուգել
- 3) վարակ, անհոգ, բազադրում, ճգնաժամ
- 4) հազենալ, աքցան, մրգառատ, օգնական

5

Ո՞ր շաբքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **ալմաստ** - թանկարժեք քար, աղամանդ, **կողակ** - ձկան տեսակ
- 2) **գրչակ** - վատ գրող, **գետնամած** - գետնին տարածված
- 3) **ասպար**- պաշտպանական զենք, **իմաստակ** - խելացի մարդ
- 4) **գրտնակ** - խմորը բացելու գլանածել փայտ, **ալոք** - էզ ուլ

6

Ո՞ր շաբքի բոլոր բառակապակցություններում փոխարերական իմաստով գործածված բառ կա:

- 1) սուր կսկիծ, արթնացող մտքեր, հարուստ գիտելիք, խոր զգացմունք
- 2) զվարքահայաց ընդունելություն, երկնածին մտքեր, խոր տարակուսանք, մեծ ավատանք
- 3) թեթև ծանոթություն, կամքերի առճակատում, նորակառույց եկեղեցի, քունոտ հայացք
- 4) ճշգրիտ արտահայտություն, բառերի հեղեղ, բազմաչարչար հող, փոքր հույս

7

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) հյուրընկալ, ասպիցական, վանատուր, վաղնջական
- 2) կասկածել, տարակուսել, երկրայել, երկմտել
- 3) թափառական, աստանդական, դյուրաշարժ, նժդիհ
- 4) մեծանուն, հանրահայտ, հռչակավոր, սնապարժ

8

Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:

- 1) նույնակարծիք, մազանոթ, ծաղկաշղթա, անդրադարձ
- 2) հոգեորդի, ոսկեվառ, դրամաշնորհ, կարեվեր
- 3) նկարագրդ, գեղաշուր, լեռնաշխարհ, չարախոս
- 4) հակամետ, լուսամփոփ, դիմանկար, ձյունագես

9

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգմակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1) մեծատառ, անասնակեր, լրագիր, որսաշուն
- 2) տեսաշար, ծաղկանախչ, շարասյուն, ձկնկուլ
- 3) օրինագիծ, ժանր, թագակիր, խաչքար
- 4) վազր, համերգաշար, թոշնաբույն, մեծատուն

10

Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) անկյուն, գարուն, որսաշուն
- 2) նուռ, կերահայր, տուն
- 3) անուն, շարասյուն, լիություն
- 4) փոստատուն, աստվածամայր, մանուկ

11

Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդի գործածություն կա:

- 1) Ծողոքորքս եմ մեղավոր այս պատժի համար. պետք չէր խոնարհվել պաշտոնի համար:
- 2) Բախսու չի բերում. միշտ հանդիպում եմ նյութապաշտ գործընկերների:
- 3) Կյանքն անցողիկ է, աշխարհս՝ ունայն:
- 4) Մանկությունն նման էր ափիս մեջ պահած ոսկեթև թիթեռի, որը չքացավ ակնթարթի պես:

12

Ածականներից քանի՞նը համեմատության աստիճանները չումնեն.

կարևոր, անաղարտ, արտաստվոր, բորիկ, ճաղատ, ապաշնորհ, կաղ, ամուրի, ազնամուլ, համը:

- 1) յոթը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

13

Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են ցուցական:

- 1) այդպես, այդշափ, մի, նույն
- 2) այս, դա, այսպես, բոլոր
- 3) մյուս, սույն, նույնքան, միևնույն
- 4) ոմն, այսպիսի, նույնպես, այնտեղ

14

Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:

- Ի՞նչ ես զազազում, իմ վիրավոր սիրու:
- 1) անվանական անդեմ
 - 2) բայական անդեմ
 - 3) անենթակա
 - 4) քերի

15

Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Մի անգամ Մարգարը ինձ մոտ խոսեց օտարության մեջ գտնվող որդուց:
- 2) Սեր հայացքներն իրար հանդիպեցին, և նրա աչքերում ժպիտ տեսա:
- 3) Լուսնյակ գիշերներին հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին:
- 4) Գնահատում եմ արածդ և անշափի երախտապարտ եմ քեզնից:

16

Փակագծերում տրված բառերի ճևափոխության ո՞ր տարրերակն է ճիշտ:

Ըստ լեզենդի՝ Եղիա մարզարեն ճանապարհ պիտի հարթեր համար դեպի Աստված, և նրա լեռները, և հարթ ճանապարհ պիտի բացվեր, բայց մարզարեի ծայնն անպատճախան

(հրեա, կանչ, իջնել, մնալ)

- 1) հրեաների, կանչով, պիտի իջնեին, և մնում
- 2) հրեայի, կանչերից, իջել էին, և մնում
- 3) հրեայի, կանչերով, կիջնեին, մնում է
- 4) հրեաների, կանչին, իջել էին, մնում է

17

Ո՞ր տարրերակում դերանունով արտահայտված ենթակա չկա:

- 1) Ողջը երազ է հիմա:
- 2) Սենք հանդիպեցինք...
Եվ ի՞նչ կատարվեց, հասկացար արդյոք...
- 3) Ինչե՞ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
- 4) Ովքե՞ր անցան ձեզանով,
Ո՞ր գընացին, ճամփանե՞ր:

18

Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Ուսքը շեմից դուրս դնելուն այն ասես ջրվեժ խշաց ականջներում:

- 1) Երբ որ ուսքը շեմից դուրս էր դնում, ջրվեժ խշաց ականջներում:
- 2) Հենց որ ուսքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշաց ականջներում:
- 3) Երբ ուսքը շեմից դուրս դրեց, ասես ջրվեժ խշաց ականջներում:
- 4) Մինչ ուսքը շեմից դուրս կդներ, ասես ջրվեժ խշաց ականջներում:

19

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Դու արածներիդ մասին մտածի՛ր, բռն՝ ես էլ իմ գործը անեմ, - չքաքցրած հեզանձրով ասաց մտախոհ իշխանը եղբորը:

- 1) Մտախոհ իշխանը չքաքցրած հեզանձրով ասաց եղբորը, որ նա իր արածների մասին մտածի, բռնի՝ ինքն էլ իր գործը անի:
- 2) Իշխանը չքաքցրած հեզանձրով մտախոհ ասաց եղբորը, որ նա բռն իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 3) Մտախոհ իշխանը չքաքցրած հեզանձրով եղբորն ասաց, որ ինքը իր արածների մասին մտածի, նա էլ իր գործը կանի:
- 4) Մտախոհ իշխանը չքաքցրած հեզանձրով ասաց եղբորը, որ նա բռն իր արածների մասին մտածի, ինքն էլ իր գործը անի:

20

Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հարևան մի կին մի օր իր ծանրքներին հայտնեց թե Իվան բեյը զնդածի պես է դարձել նա ինքնիրեն շարունակ ժպտում է ձեռքերը մոտեցնում սառը վառարանին ու իրար շփում:
- 2) Ամբողջ գյուղն այդ գիշեր դուրս էր թափվել բայց արդեն ուշ էր խրճիթը վառվում էր նավթոտ փալասի պես:
- 3) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:
- 4) Մի օր դա իրենց բաժանման յոթերորդ օրն էր հանկարծ դուռը թակեցին և ինչ-որ անծանոք մարդ նրան նամակ հանձնեց:

21

Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Հետագայում անսովոր երևոյթները գրավել են Կալիֆոռնիա այցելող զրոսաշրջիկների կամ նույն վայրում ամառանոց կառուցող ինժեներների ուշադրությունը: Այստեղ մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվացել, իսկ մի քանի անգամ վերակառուցված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնել, թեև հարթաչափը բազմից ցույց է տվել ուղիղ հարթություն:
 2. Վերջին տարիներին կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նման վայրեր կան երկրագնդի տարրեր տեղերում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հայտնաբերելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ նման անոմալիաները գործում են խիստ սահմանափակ տարածքներում:
 3. Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չեն բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով:
 4. Մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկը, որն առաջին անգամ բացահայտել են դեռ հնդկացիները, գտնվում է Կալիֆոռնիայում. այստեղ ֆիզիկայի մի քանի օրենքներ պարզապես չեն գործում, քանի որ գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, առարկաները, որոնք պետք է կանգնեն ուղիղ, անկյամբ թեքված են գետնի վրա, իսկ մարդիկ կարող են քայել պատերով:
- 1) 3, 4, 1, 2
2) 4, 2, 3, 1
3) 3, 2, 4, 1
4) 4, 2, 1, 3

22

Տրված հատվածներից որո՞վ է սկսվում Մովսես Խորենացու «Ողբը»:

- 1) «Մեզ տիրել են խատասիրու ու չար թագավորներ, որոնք ծանր ու դժվարակիր թեռներ են բարձում, անտանելի հրամաններ տալիս»:
- 2) «Ո՞ւր է այս զվարք շրթունքների ժայխոր լավ աշակերտներին հանդիպելիս... Ո՞վ պետք է այսուհետև հարզի մեր ուսումը, ո՞վ պիտի ուրախանա իմ՝ իր աշակերտի առաջադիմությամբ...»:
- 3) «Ողբո՞ւմ եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբո՞ւմ եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնություն»:
- 4) «Վարդապետները՝ տիսմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատվի արժանացած և ոչ թե Աստծուց կոչված, արծաթով ընտրված և ոչ թե Սուրբ Հոգով»:

23

Նշվածներից ո՞րը Գրիգոր Նարեկացու տաղերից չէ:

- 1) «Տաղ Հարության»
- 2) «Տաղ Վարդավարի»
- 3) «Մեղեղի ծննդյան»
- 4) «Տաղ անձնական»

24

«Սասունցի Դավիթ» էպոսում ինչո՞ւ է Դավթի ձեռքի Խաչ պատերազմին սկանում:

- 1) Երդվել էր մարտի ելնել Պղնձե քաղաքի բազավորի թշնամիների դեմ և ազատել նրան հարկից, բայց խոստումը դրժել էր:
- 2) Խոստացել էր փակլեաններին ամուսնացնելուց հետո շտապ դառնալ Խանութի ու զավակի մոտ և ուշացել էր:
- 3) Երդվել էր յոթ օրից վերադառնալ Զմշկիկ Սուլթանի մոտ, որ կռվեն, և մոռացության էր տվել:
- 4) Հովհաններին խոստացել էր վաճքից հարիսա բերել, բայց 40 ավագակների դեմ կռվի մեջ մտնելով՝ մոռացել էր:

25

Նահապետ Քոչչակի «Ժամ-ժամ զիմ դարիպութիւն» հայրենում քնարական հերոսը ինչի՞ հետ իրեն չի համեմատում:

- 1) կռունկի
- 2) ջրի
- 3) նետի
- 4) աղեղի

26

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում ո՞վ է իր կալվածքները փոխանակում արխազների հետ և հեռանում Հայոց աշխարհից:

- 1) Աշոտ Բռնավորը
- 2) Սահակ Սևադան
- 3) Հովհաննես կաթողիկոսը
- 4) Յլիկ Ամրամը

27

Ո՞րն է Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլարում արծարծված հիմնական գաղափարը:

- 1) գործի աննահության գաղափարը
- 2) մերժված սիրո տառապանքը
- 3) կյանքի անցողիկությունը
- 4) հավերժական սիրո ձգտումը

28

Խոսքերից ո՞րը Լևոն Շամբի «Հին աստվածներ» դրամայի նշված հերոսներից որին է:

- | | |
|---|--------------|
| 1. «Այդ եկեղեցին շիներ ենք մեզի համար, մեր սիրո Աստծուն համար»: | ա. Քողավոր |
| 2. «Զիս ու սուրս թե հերքի չեկավ, կուտայի քեզի և աղջիկս»: | բ. Իշխան |
| 3. «Այն Հովհաննեսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա հնու կեցած է վանական մը, գրեթե ծերունի մը, հեռու արքունիքն ու ամենքն...»: | գ. Իշխանուիի |
| 4. «Իջե՛ք, իջե՛ք, երազներ, իջե՛ք զգո՛ւյշ, երազներ...»: | դ. Վանահայր |

- 1) 1-գ, 2-թ, 3-դ, 4-ա
- 2) 1-դ, 2-թ, 3-գ, 4-ա
- 3) 1-ա, 2-թ, 3-թ, 4-գ
- 4) 1-գ, 2-թ, 3-ա, 4-դ

29

Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Անց եմ կենում. շուրջս-մարդիկ, շուրջս դեմքեր հազար-հազար.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար...

- 1) «Տաղ անձնական»
- 2) «Գանգրահեր տղան»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Դանքեական առասպել»

30

Հատվածներից ո՞րը Հովհաննես Շիրազի որ բանաստեղծությունից է:

- ա. Շանքն է քեկվում ճակտիս վրա,
Մահ՝ չգիտեմ՝ կա՞ թե՞ չկա
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:
թ. ...Անդադար նայեմ իմ Արարատին,
Մինչ շիրիմ դառնա քարն էլ ինձ վրա,
Եվ մամուած նայե իմ Արարատին:
զ. -Ի՞ նշ թարմություն- ասացին,- ի՞ նշ թարմություն, ու քացին
Լուսամուտներն իմ առջև, ու ես՝ իմ սիրտը քացել՝
Անցնում էի երգելով ու շադ տալով մայթերին...
դ. Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
...Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,
Որ գարունները գան ու չգնան...

1. «Կուզեի նստել մի քարի վրա»

2. «Թագաղբում»

3. «Հայ ժողովրդի երգը»

4. «Գարնանամուտ»

1) ա-1, թ-3, զ-4, դ-2

2) ա-3, թ-4, զ-1, դ-2

3) ա-2, թ-3, զ-4, դ-1

4) ա-3, թ-1, զ-4, դ-2

31

Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:

- ա. Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,
Զյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ ետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ զամ, զարունը բերեմ:
1. Հ. Սահյան
2. Պ. Ալակ
3. Ե. Չարենց
4. Հ. Շիրազ
- բ. Արևոտ մի սար եմ հիշում՝
Ծակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Շուրթերին հայրեն ու տաղիկ:
1) ա-4, բ-2, գ-3, դ-1
2) ա-4, բ-1, գ-2, դ-3
3) ա-1, բ-3, գ-2, դ-4
4) ա-2, բ-1, գ-4, դ-3
- գ. Ուշ-ուշ են զալիս, բայց ո՞չ ուշացած,
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Բայց ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:
1) Իմ մահվան օրը կիջնի լուսություն,
Ծանր կնսողի քաղաքի վրա,
Ինչպես ամա մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում զրած:
Կամ լուր աղետի՝ թերթերում զրած:
1) ա-4, բ-2, գ-3, դ-1
2) ա-4, բ-1, գ-2, դ-3
3) ա-1, բ-3, գ-2, դ-4
4) ա-2, բ-1, գ-4, դ-3
- դ. Իմ մահվան օրը կիջնի լուսություն,
Ծանր կնսողի քաղաքի վրա,
Ինչպես ամա մթին կամ հին տրտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում զրած:
1) ա-4, բ-2, գ-3, դ-1
2) ա-4, բ-1, գ-2, դ-3
3) ա-1, բ-3, գ-2, դ-4
4) ա-2, բ-1, գ-4, դ-3

32

Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Այդում են դժվար ու մեռնում են հեշտ...*

- 1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարդ մեծաց»

33

Տրվածներից քանիսն են բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները գրվում մեծատառով.

ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՍԻԿՈՆԵԽՅ ՏԻԿԻՆ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՏԱՎՐՈՍ ԼԵՂ, ԳԵՏԱԱՆ ԳԵՏԱԿ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱՆ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ:

34

Բառերից քանիսն են հոդակապով.

Լուսանցք, բառախաղ, վայրէջք, ինքնաեռ, զինեմոլ, հարսնատես, սևերես, լուսաշող, այրուձի, մարդանման:

35

Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.

ինչո՞ւ, նույն, այդպիսի, այսպես, յուրաքանչյուր, ոմանք, երբևիցեն, մեկը, որևէ, սույն:

36

Տրվածներից քանի՞սն են անորոշ դերայ.

ուոչել, համապատասխանեցնել, հուսահատեցրել, թվացել, անզգայացել,
կոնկրետանալ, դարձել, դառնալ:

37

Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:

Երթամ հիմա: Ու կարոտով անմիջաբար,
Իմ՝ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար...
Տա՞մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ:

38

Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.

Վիատ խոսքեր, *ոսկի* արտեր, *երերուն* քայլվածք, *բարձր* ծիծառ, *ցնորս* աղջիկ,
մեռնող արեգակ, *ճիրիող* դաշտեր:

39

Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.

1. զեկույց, 2. վարդազգի, 3. գահավեժ, 4. տարկետում, 5. զինապահեստ,
6. խոսափող, 7. գազալցակայան, 8. անզգուշաբար, 9. բազան:

40

Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:

1. փորացավ ունենալ - անվանը մուր քսել
2. ով հարս, նա հարսնաքույր - անպոչ գդալ
3. ինքն իրեն մոռանալ - համը դուրս գալ
4. աստծու կրակ - աչքի սուրնա թոցմող

41

Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).

1. աղտոտել, 2. դիմադրել, 3. գահակալել, 4. դիպչել, 5. հասկանալ, 6. շուտ գալ,
7. թոցնել, 8. հնչել, 9. մրոտվել:

42

Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների համարները:

Ամսառային զիշեր էր. Ուկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավայն խրճիթի լուսամուտի տակ, որտեղից առկայժում էր բեկրեկուն լույսը:

1. **առկայժում էր** – պարզ ստորոգյալ, **բեկրեկուն** – որոշիչ
2. **ամառային** – որոշիչ, **զիշեր էր** – պարզ ստորոգյալ
3. **Ուկանը** - ենթակա, **կանգ առավ** - բաղադրյալ ստորոգյալ
4. **այն** – որոշիչ, **խրճիթի** – հատկացուցիչ
5. **լուսամուտի տակ** – տեղի պարագա, **որտեղից** – տեղի պարագա

43

Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերքայական դարձվածները չպահպանվեն:

1. Հոգմած երկար ճանապարհից հեծյալը իջավ ձիուց և նստեց ծառի տակ:
2. Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր:
3. Լառ-Մարզարի համար ամենից մեծ հաճույքը այզին ու արտերը ջրելն էր:
4. Ներս մտավ Շուշանիկը դաշտային ծաղիկների մի փունջ բռնած:
5. Սի վայրկյանում շոգի դառնալով ջուրը ավելի էր բորբոքում կրակը:

44

Դասավորել համարները՝ ըստ Ավետիք Իսահակյանի «Արու-Լալա Մահարի» պոեմի տողերի հաջորդականության:

1. Ծիածանաք հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով
2. Սեխակի բույրով հովն էր շշնջում հեքիաթներն հազար ու մի զիշերվա
3. Նիրհ էին մտել ծաղկունքը բուրյան՝ աղամանդներով, շրեղ զինդերով
4. Արմավն ու նոճին անուշ քնի մեջ՝ օրորվում էին ճամփեքի վրա

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ ճիշտ է, Սխալ է, Զգիտեմ տարրերակներից որևէ մեկը:

1. Որոշիչը կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով:
2. Որոշիչը կարող է արտահայտվել անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ դերանուններով:
3. Որոշիչը չի կարող հանդես գալ բառակապակցությամբ:
4. Որոշիչը կարող է հանդես գալ կապական կառույցներով:
5. Որոշիչը կարող է արտահայտվել հարակատար և համակատար դերքայներով:
6. Հետադաս որոշիչը միշտ արտահայտվում է բառակապակցությամբ:

Բ մակարդակ

46

Համարակալված բառերում բաց քողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Քիչ հե-վում (1)` ու-իդ (2) իմ դիմաց, Արարատն է՝ մեր պատմության մեջ որ-ն (3) ու տա-ազիրը (4): Ալ-արս (5) այս լեռը երևի աշխարհի ամենաբարձր սարն է. հայ մարդուն նա երևում է աշխարհի բոլոր ծա-երից (6): Տա-ական (7) ճշմարտություն է. կարտում են հարազատին: Դեռ չեմ լսել, որ որևէ- (8) բոլոր կարտի այս սարին: Իսկ հեռվում ու-արերձ (9) բարդիների կատարներին թևածող արագիլները սաստկացնում են հոգու- (10) ցավը:

- 1) 1-ո, 2-դդ, 3-փ, 4- լ, 5-եվ, 6-կ, 7-բր, 8-է, 9-դ, 10-ս
- 2) 1-լ, 2-դ, 3-ք, 4-բր, 5-եվ, 6-զ, 7-լ, 8-ե, 9-դդ, 10-դ
- 3) 1-ո, 2-դ, 3-փ, 4-բր, 5-և, 6-կ, 7-լ, 8-ե, 9-դ, 10-ս
- 4) 1-ո, 2-դ, 3-ք, 4-բ, 5-եվ, 6-զ, 7-բր, 8-է, 9- դդ, 10-դ

47

Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկը չի շեշտվում.

- 1) երկրորդ, բուռն, գոնե, ուժ տալ
- 2) հեռուստացույց, գրքերս, թագավորի, ընկերական
- 3) ամենուրեք, անգղ, արծաքն, նույնքան
- 4) գրեթե, դառը, կարծիքն, դասարանը

48

Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.

- 1) ՌՆԼԷ -5327
- 2) ԶԶԶ- 785
- 3) ՓԶԽՆԴ- -8934
- 4) ՍՆՉԱ-2481

49

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Անցյալ անգամ ես իմ զոհունակությունը ասացի այս նախագծի մասին և այսօր էլ կրկնում եմ:
- 2) Փոխանակ տքնածան աշխատելու և պարապելու՝ ողջ օրը անգործ թափառում է:
- 3) Հեռվից լսվում էր փոթորկված ծովի ալիքների հզոր շառաչյուն:
- 4) Ես քեզ մոտ եմ եկել այն հույսով, որ ինձ նեցուկ կլինես այս դժվար պահին:

50

Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա.

- 1) աչքն ուտել – մի բան հավանել, աչքերը խավարել – կուրանալ
- 2) ականջը ցցել – տեղեկացնել, ականջը ծանր – լսողությունը բույլ
- 3) ականջը դռանը – անհանքեր որևէ լուրի սպասել, թևերը կտրել – հեռու վանել
- 4) աչքերը կապել – խորամանկությամբ խարել, աչք դնել – հավանել

51

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) հետաքննիչ - **հետ,քննի՛՛**՝ արմատներ, **իշ՝** վերջածանց, **աւ՝** հոդակապ
- 2) հեղուկագրկում - **հեղ,գուրկ՝** արմատներ, **ուկ,ում** վերջածանցներ, **աւ՝** հոդակապ
- 3) սննդամթերք - **սուճ,մթերք՝** արմատներ, **ուժոք՝** վերջածանցներ, **աւ՝** հոդակապ
- 4) ստուփություն - **սուստ,սոու**՝ արմատներ, **ություն՝** վերջածանց

52

Ո՞ր տարրերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) **շահ** ստանալ - պարսից **շահ**
- 2) **ակնարկ** նետել - **ակնարկ** տպագրել
- 3) գետի **ափ** - ձեռքի **ափ**
- 4) **գորշ** օրեր - **գորշ** վերարկու

53

Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Նուշիկը երեմն նախաճաշ չի բերում, իսկ երբ բերում է, հաց է ու խորոված կարտոֆիլ:
- 2) Գյուղական գրազիրը բղավեց նրա վրա, նա սրափիվեց և բեռը շալակին՝ վերադարձավ յուրայինների մոտ:
- 3) Աննան քաղաքի փողոցներում վախից, անհանգստությունից մոլորվել էր:
- 4) Հաճի աղան տեսել էր ոուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հետ էր մղվում:

54

Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ըղձական եղանակով:

- 1) չգայի, ընդունվի, հարգեր, լսվեին
- 2) չբերեմ, չեմ բերի, չզրեիր, իսոսեմ
- 3) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային
- 4) բերեմ, ունեմ, հարցնեմ, ասեմ

55

Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակրայ:

- 1) Քանի՛ - քանիսն անցան քեզ պես, քեզնից **առաջ**, քո **առաջ**:
- 2) Կինը նստել էր օջախի **առաջ**, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին:
- 3) Սուսն հապաղելու **առաջ** զնա, ամեն ինչ դեռ առջևում է:
- 4) Չարթում էր Պետին, տան **առաջ** հոսող առվակի ջրում երեսը լվանում:

56

Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Այս քամին է թափում աշնան չոր սաղարթը
Թե ողի է թափվում իմ թմրած ուղեղին:
- 2) **Թե** Կարինե քորանձյանին տեսնեք Կարսի փողոցներում
Ասեք նրան Չարենցն ասավ մնաս բարով մնաս բարով:
- 3) Սոնան մանկության առվակի ջրերն էր կարոտել **թե** պատահմամբ մոտեցավ
հնձանի դռնակին Դիլան դային շիմացավ:
- 4) Լինել **թե** չինել այս է խնդիրը:

57

Գործիական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

Համը քայլերով դարերն են անցնում,
Արտուրով երգում է իր զովքը գարնան:

- 1) ձևի պարագա
- 2) ժամանակի պարագա
- 3) ներգործող անուղղակի խնդիր
- 4) միջոցի անուղղակի խնդիր

58

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:

- 1) Երբ հյուրերը գնացին, կիմը մենակությունից լաց եղավ:
Հյուրերի գնալուց հետո կիմը մենակությունից լաց եղավ:
- 2) Երբ դողանջում են եկեղեցու զանգերը, հավատացյալները գնում են աղոթքի:
Եկեղեցու զանգերը դողանջելու ժամանակ հավատացյալները գնում են աղոթքի:
- 3) Երբ խոսում էին Արայի մասին, Աննան ոտքից գլուխ կարմրեց:
Արայի մասին խոսելուց Աննան ոտքից գլուխ կարմրեց:
- 4) Եթե կորցնում ես խիղճդ, վերածվում ես մի սովորական զազանի:
Խիղճդ կորցնելու դեպքում վերածվում ես մի սովորական զազանի:

59

Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):

- | | |
|--|------------------------|
| 1. Այն լուրերը, թե ծովանկարիչը ստեղծել է արտասովոր | ա. ենթակա |
| մի նկար, արագորեն հասան Պետերուրոց: | բ. ուղիղ խնդիր |
| 2. Վախենուում էր արքային տեղեկացնել, որ ազդեցիկ մի քանի նախարարներ, ծեծելով հարկահաններին, | գ. վերաբերության խնդիր |
| հրաժարվել էին արքունի տուրքերը վճարելուց: | դ. ժամանակի պարագա |
| 3. Նրանք դեռ կիրճը չեին անցել, երբ թիկունքից
աղաղակներ լավեցին: | ե. որոշիչ |
| 4. Թվաց, թե այդ ամենը չի եղել, ու ես մղձավանջային
երազի մեջ եմ: | |

- 1) 1-ե, 2-ը, 3-դ, 4-ա
- 2) 1-զ, 2-ը, 3-ա, 4-դ
- 3) 1-ե, 2-ա, 3-դ, 4-ը
- 4) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ը

60

Նշվածներից ո՞րը չի կարող դրվել բացառական հոլովով:

- 1) գոյական որոշիչը
- 2) ներգործող խնդիրը
- 3) մասնական բացահայտիչը
- 4) հանգման խնդիրը

61

Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Ինչ էր ուզում դրանով ասել՝ այդպես էլ չհասկացա:;
- 2) Իսկ Աղամը ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը շիեռացնելով նրա՝ բոցերի պես ծփծփացող մազերից:
- 3) Այն զգացումները, որոնք հատուկ են բոլորին, ամենին գոյություն չունեին նրա համար և մեղադրել նրան դրա համար անիմաստ էր:
- 4) Զրադացը, թվում է, անուշ հեքիաթ էր պատմում իմ նանկության մասին:

62

Նշվածներից ո՞րը հայ իին և միջնադարյան քանահյուսության ժանրերից չէ:

- 1) շարական
- 2) էպոս
- 3) առակ
- 4) առասպել

63

Ո՞ր շարքում նշված բոլոր հեղինակներն են սփյուռքահայ:

- 1) Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց, Հակոբ Պարոնյան
- 2) Կոստան Չարյան, Սիսաք Մեծարենց, Հակոբ Օշական
- 3) Համատեղ, Հակոբ Մնձուրի, Մուշեղ Իշխան
- 4) Վազգեն Շուշանյան, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան

64

Քանի՞ քառում արմատի հնչյունափոխություն կա.

սրտագին, արարչագործ, ծնունդ, կպչուն, հնչեղ, կուտակել, տիրություն, լծորդ, փախստական, ակնթարթ, փափկել, հեռաստան:

65

Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.

փոխարերություն, մակդիր, շրջադասություն, հակադրություն, համեմատություն, հանգավորում:

Սարերի ծոցից սարեր են ծլում,
Ծարժվում են կարծես սարերը տեղից,
Ծառն իրենից մեծ ստվեր է ծնում,
Եվ օրը արդեն գնում է ձեռից:

66

Հովհաննես Թումանյանի նշված ստեղծագործություններից քանի՞սն են քանաստեղծություն:

«Հայոց վիշտը», «Հոգեհանգիստ», «Հառաշանք», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ», «Թմկաբերդի առումը», «Փարվանա», «Անուշ»:

67

Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.

1. թուլակազմ,
2. թուլամորթ,
3. կամովին,
4. կամային,
5. կամկար,
6. անտեղյակ:

68

Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:

Միքամ, ինչ ես սիրում էի այդ գերու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:

1. **հազվագյուտ** – ձևի մակրայ, շնորհ – գոյական, ուղղական հոլով
2. **ինչ** – ստորադասական շաղկապ, **ես** – անձնական դերանուն, ուղղական հոլով
3. **այդ** – ցուցական դերանուն, **սիրում էի** – պարզ բայ, ներգործական սեռ
4. **մարդու** – գոյական, **ու** հոլովում, **մեջ** – կապ, հետադրություն
5. **երբեք** – ժամանակի մակրայ, **չէր տալիս** – անկանոն բայ, անկատար անցյալ

69

Ո՞ր նախադասություններում է ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված:

1. Հետո անձրև սկսվեց, և անձրևի առաջին կաթիլների հետ անջրանցիկ կտորով ծածկեցին ցորենը: (*միջոցի անուղղակի խնդիր*)
2. Եվ աստծուն լսելի եղան Խայամի տրտունջն ու հանդիմանությունը: (*ենթակա*)
3. Իշխանը ձին ասպանդակեց ու արագ հեռացավ այդտեղից: (*անջատման անուղղակի խնդիր*)
4. Աղջկա հետևեցի հասանք, և ամեն ինչ պարզ դարձավ մեզ համար: (*ենթակա*)
5. Երկար խոսեցին այդպիսի վերաբերմունքի շուրջ ու ոչ մի եզրակացության էլ շեկան: (*վերաբերության անուղղակի խնդիր*)
6. Պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը որպես **բեռ** քաշող մի քանի պատանիներ էին: (*մասնական բացահայտիչ*)

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Զգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Եթե բարդ նախադասության բաղադրիչ նախադասության կազմում կա ստորադասական շաղկապ, ապա այդ նախադասությունը ստորադաս է:
2. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց կարող են կապակցվել թե՛ շաղկապներով, թե՛ առանց շաղկապների:
3. Բարդ նախադասություններ են երկու և ավելի ստորոգում ունեցողները:
4. Երկրորդական (ստորադաս) նախադասությունները հաճախ փոխարինում են գերադաս նախադասության որևէ անդամի:
5. Բոլոր բարդ նախադասությունները փոխակերպվում են պարզի:
6. Բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի կազմում գտնվող **որ, երբ, ինչպես, ուր** և այլ դերանունները պարտադիր հարաբերական դերանուններ են: